ՆԱԽԱԳԻԾ

ՀՈՒՆԻՍ 2025թ.

ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱ՝ ՄԻՔԱՅԵԼ ԱՐՄԵՆԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲԱԺՆԵՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 21-ի N 631-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղի Մուսալեռի փողոց տուն 29 հասցեի բնակչուհի Սոնա Սուրենի Աբրահամյանի 2025 թվականի մայիսի 12-ի N 2084 դիմումը՝ իր անչափահաս երեխա՝ Միքայել Արմենի Սուքիասյանին (ծնված 2013 թվականի հունվարի 25-ին, ծննդյան վկայական՝ ԱԲ 248100), ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող ՝ 04-065-0039-0022-002-003 կադաստրային ծածկագրով 31.4 ք.մ. մակերեսով բնակարանի 1/8 բաժնեմասը (ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղում գտնվող) օտարելու վերաբերյալ և Փարաքար համայնքի <<Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի>> 2025 թվականի հունիսի 04-ի թիվ 01 նիստի թիվ 03 արձանագրությունը.

Որոշում եմ՝

1. Թույլատրել Սոնա Սուրենի Աբրահամյանին (ծնված՝ 1979 թվականի մարտի 03-ին, անձնագիր՝ AL0217504, տրված 2023 թվականի ապրիլի 19-ին, 057-ի կողմից, ՀԾՀ 5303790029) օտարելու իր անչափահաս երեխա՝ Միքայել Արմենի Սուքիասյանին (ծնված 2013 թվականի հունվարի 25-ին, ծննդյան վկայական՝ ԱԲ248100) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 04-065-0039-0022-002-003 կադաստրային ծածկագրով, նպատակային նշանակությունը՝ բնակելի, 31.4 ք.մ. մակերեսով բնակարանի 1/8 բաժնեմասը:

2. Հսկողություն սահմանել անչափահաս երեխա՝ Միքայել Արմենի Սուքիասյանի (ծնված 2013 թվականի հունվարի 25-ին, ծննդյան վկայական՝ ԱԲ248100) մայրիկի՝ Սոնա Սուրենի Աբրահամյանի (ծնված՝ 1979 թվականի մարտի 03-ին, անձնագիր՝ AL0217504, տրված 2023 թվականի ապրիլի 19-ին 057-ի կողմից) գործողությունների նկատմամբ:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Փարաքար համայնքի ղեկավարին՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սոնա Սուրենի Աբրահամյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱԼՈՂՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

1. Համայնքի ղեկավարի տեղակալ
2. Իրավաբանական բաժին
3. Սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժին